Այդ երևոյթի գլխաւոր պատճառը գաւառի անապահով դրութիւնն է։ Պատրաստ է միայն էշի կարաւանը, որի համար էլ պէտք է սպասես օրերով, երբեմն և շաբաթներով, մինչև նոր չարուադարի գալը, որի հետ ահ ու զարդանդով ճանապարհ ես ընկնում և հազիւ 5—6 օրուայ ընթացքում հասնում տեղդ և այն էլ ոչպիսի դժուարութիւններով և տանջանքներով։ Պաշտօնական հաստատութիւններն առանձին «զասիդ»—(սուրհանդակ) են վարձում իրենց գործերի համար։

Ահա սիրելիս, այսպիսի դժուար պայմանների մէջ է գտնուում այս գաւառի ճանապարհորդութիւնը։

Արտահանում եւ ներմուծում։ Ընդհանրապէս փերիա գաւառից դէպի Նոր—Զուղա և այլ տեղեր արտահանուում է՝ ցորեն, գարի, հաճար, ոչխար, կով, կաթ, մածուն, պանիր, իւղ, չորթան, միս, բուրդ և այլն, իսկ այլ երկիրներից ներմուծուում է՝ աղ, թէյ, շաքար, պղպեղ, լուցկի, նաւթ, խունկ, մոմ, դեղեր, քաղցրաւենիք, պղինձ, զէնք, կտաւ, ակնեղէն, անագ և ուրիշ ապրանքներ։

*
* *

Տեսար սիրելի Վարդուհի, թէ ինչպիսի ողբերգական հանգամանքների մէջ են ապրում մեր աշխատանքի հերոսները։ Այս սիրելիս, այստեղ դեռ դարերի առաջխաղացումը, քաղաքակրթութեան բարիքները մուտք չեն գործել. այստեղ տիրապետողը միջնադարեան խաւարն ու տգիտութիւնն է։ Գիւղերում չկան լրագիրներ, թատրոններ, հեռագիր, հեռախօս, պօստ, այդ բարիքներից օգտուելու հնարաւորութիւնից զուրկ է գիւղացիութիւնը։ Չկան նոյնպէս կօօպերատիւ ընկերութիւններ, կատարելագործուած գիւղատնտեսական մեքենաներ, կոլեկտիւ ձեռնարկութիւններ գիւղատնտեսական ճիւղերի համար, այնպէս որ գիւղացիութիւնը դեռ հին-նահապետական ձևով է առաջ տանում երկրագործական կուլտուրան և տեխնիկան։